

«Երբ քիլիմ կը հիւսուի, ուղղահայեաց թեւերը կը լարուին խաւարը գորգերու համար եղածին պէս, եւ այս թեւերը կը հաշուուին 6էն 18 թեւ իւրաքանչիւր ինճէզի մէջ: Ընդհանրապէս 20 հատ ալ խաճածեւոյ թեւեր կ'ըլլան ինճէզին, հաշուելով առջեւէն թէ ետեւէն, բայց նրբագոյն աշխատութեանց կտորներուն մէջ մինչեւ 50 թեւ կ'ըլլայ, իսկ ամենակոշտերուն մէջ միայն 8 կամ 9: Քիլիմին կողերը, խաճածեւ թեւերը կ'ոլորուին վերջին ուղղահայեաց թեւին, ինչպէս նաեւ որեւէ զծածեւի եզերքը: Բայց քիլիմին ծայրերը ուղղահայեաց թեւերը կը հիւսուին յաւելեալ աւելի հաստ թեւի մը, եւ կամ կը կապուին կապերու նման, որոնցմէ ազատ թողուած ծայրերը կը կախուին իրր ծոպեր»⁽²⁾:

Վերի տողերը ցոյց կու տան քիլիմի բանուելուն կերպը: Ինծի ծանօթ հայկական կապերաները չորս տեսակ են:

Ա. — Անոնք որոնք ունին խաճածեւ ուղղածիւ թեւերու ցանց մը, որուն վրայ գունաւոր բրդեայ թեւերով կը բանուի գորգերու նման զծածեւեր: Խաճածեւոյ թեւերը այս տեսակ բանուածքներուն մէջ կապերտին մէկ կողմէն միւսը կը հասնին կանոնաւոր կերպով: Եւ զծածեւերու բանուածքին գունաւոր թեւերու անպէտ ծայրերը ազատ կը թողուին կապերտին կանակին: Ասոնց աւելի լաւերուն մէջ այդ թեւերը կարճ կը կտրուին, այսպէս տալով աւելի աւարտած երեսոյթ մը կապերտին:

Բ. — Նման առաջինին, միայն թէ խաճածեւոյ թեւերը կը հասնին զծածեւերուն իւրաքանչիւր գոյներուն եզերքը, եւ ետ կու գան մինչեւ այդ գոյնին աւարտիլը, եւ այսպէս շարունակաբար իւրաքանչիւր գոյնին համար:

Գ. — Թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ տեսակէն, միայն թէ կապերտին երկու երեսներն ալ հաւասարապէս աւարտած կ'ըլլայ եւ կարելի է կապերտին երկու կողմերն ալ գործածել:

Դ. — Այս վերջին տեսակին հիւսելակերպը բոլորովին կը տարբերի նախորդներէն: Հաւաքածոյիս մէջ ունիմ կտոր մը, ձեռք բերուած Երզնկայի մէջ: Ոտք մը կամ 9 ինճէզ լայնքով երկար շերտեր են անոնք շատ ցանցաւ բուրդէ կերպասի մը, կամ՝ միջակ լաւ հիւսուած ալիւրի տոպրակի մը նման, որուն վրայ սակայն յետոյ ասեղով ձեռագործ կը բանուին վանագան գորգի զծածեւեր: Այս շերտերը կ'ըլլան ճերմակ, սեւ կամ մուր չաղանակապոյն՝ ամբողջովին բուրդ: Այս շերտերը յետոյ իրար կը կարուին կազմելով կատարեալ կապերտներ, որոնք սակայն ծանր գործածութեան չեն դիմանար եւ շուտ կը մաշին:

Ահա այդ չորս տեսակ բանուած կապերտները:

(2) Անդ, նոյն, էջ 277: